ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ԼՈՐԵՏԱ ԴԱՆԵՂՅԱՆ

ԵՂԻԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՋԱՏԱԳՈՎ

Ավելի քան երկու և կես դար է բաժանում մեզ այն փոթորկալի իրադարձություններից, որոնցով լի էր XVIII դ. առաջին քառորդում Պարսկաստանում հասարակական-քաղաքական գործունեություն ծավալած վիճակեան Եղիա Մուշեղյանի կյանքը։

Գիտական շրջանակներին որոշակիորեն ծանոթ է այդ անունը։ Եվ դա՝ շնորհիվ նրա ծավալուն դիվանի, որը մի օր հայտնվեց Ռուսաստանում՝ Արտաքին գործոց նախարարության արխիվում հանդիպվելու[1], նաև շնորհիվ այդ բաղմաբեղուն գործչի թողած հուշամատյանի[2], որ գրվեց նրա ծննդավայրում՝ Կաբինում և ի վերջո հայտնվեց Վիեննայի Մխիթարյան մատենադարանում։

Հիշյալ դիվանին ի մոտո ծանոթությունն ի հայտ է բերում Եղիա Մուշեղյանի կյանքի ու գործունեության խորքերը բացահայտող տեղեկությունների նորանոր շերտեր և, առաջին հերթին, նրա հանելուկային բանտարկության պատճառները, ընթացքն ու ավարտը։ Այստեղ պահպանվող բազում նյութերի մեջ կա մի մեծադիր թղթապանակ (331 թերթից բաղկացած), որն իրենից ներկայացնում է Եղիա Մուշեղյանի բանտարկության (կամ մեղադրական) գործը[3]։ Այն սկսվում է դեներալ-մայոր իշխան Տրուբեցկոյի՝ 1724 թ. մարտի 15-ի զեկույցով, որն Արտաքին գործոց կոլեգիային իրազեկ է դարձնում Մուշեղյանի դիվանագիտական անձնակազմի՝ Աստրախան ժամանելու մասին։ Հայտնվում է, որ Պարսկաստանից «Գիլանի վրայով ծովով Աստրախան է եկել ֆրանսիացի կապուչին 11 մարդկանց հետ, որոնց թվում են՝ վրացիներ, հայեր ու պարսիկներ...»[4]։ Զեկույցին հետևում են մի շարք պաշտոնական գրություններ և, ի վերջո, 1724 թ. մայիսի 15-ի «Նորին կայսերական մեծու-

թյան հրովարտակը», որով ցուցում էր տրվում «հիշյալ կապուչինին և նրան ընկերակցող մարդկանց Աստրախանից տեղափոխել Մոսկվա, ապա՝ Ս. Պետերբուրգ»[5]: Եվ դրանով էլ սկսվում է Եղիա Մուշեղյանի կյանքից 12 տարի խլած ռուսաստանյան փուլի գողգոթան՝ հարցաքննությունների, վկայությունների, գրագրությունների, դեկույցների, ցուցմունքների շղթան, բանտարկություն, աքսոր և ի վերջո՝ արդարացում և ազատում: Ռուսական իշխանությունները վերջապես հասկացան, համոզվեցին, որ Եղիա Մուշեղյանը ոչ թե լրտես է, գաղտնի գործակալ, ինչպես զրպարտությամբ ներկայացրել էին նրան, այլ ընդամենը Պարսկաստանից Եվրոպա էր ուղևորվել հատուկ առաքելությամբ, որի նպատակն էր Սեֆյան նորընծա շահ Թահմասպի ուղերձները հանձնելու Ֆլանսիայի թագավոր Լյուդովիկոս XV-ին, ավստրիական կայսր Կարլոս VI-ին և Հռոմի Ինոկենտիոս պապին:

Եղիային ամբաստանել էին մի քանի հոգի նրա շրջապատից՝ սկսած Ռուսաստանում սյարսից դեսպան Իսմաիլ-բեկից մինչև իր մտերիմ պատրի Հովհաննեսը, որը պատվիրակության կազմում էր և բավականին գործունյա գերակատար:

Խնդրո առարկա թեմային առնչվող շատ հարցերի լուսաբանման համար հարկ կա անդրադառնալու Մուշեղյանի ինչպես քաղաքական հայացքներին, այնպես և կաթոլիկ հայերի, պարսից պաշտոնյաների, պարսկահայ համայնքի, իր սնօրեն Ֆրանսիացի Բորեգարի և այլոց հետ փոխհարաբերություններին:

Հայտնի է, որ Եղիա Մուշեղյանը մեծացել է Կարինի կաթոլիկ կրոնավորների շրջապատում, որոնց հետ իր կապերը չի խզել նաև ծննդավայրից հեռանալուց հետո՝ և՛ տասնամյա աստանդական կյանքի ընթացքում, և՛ 1717 թ. հետո, երբ հանգրվանեց Պարսկաստանում (Թավրիզում)[6]:

Շնորհիվ այն բանի, որ առևտրական գործունեությանը զուգընթաց Եղիան ապրում էր ակտիվ հասարակական կյանքով և մեծ հեղինակություն ուներ շրջապատում, բարենպաստ հող է ստեղծվում նրա համար՝ իր եռանդն ու կապերն ի սպաս դնելու Պարսկաստանում հաստատված եվրոպական կաթոլիկ միսիոներական կազմակերպությունների ներկայացուցիչների առջև ծառացած խնդիրների լուծմանը: Դա են հավաստում Մուշեղյանի դիվանի մի շարք վավերագրեր: Մեծ է նրա ավանդը հատկապես Գանձակի կաթոլիկների վիճակի բարելավման գործում, իսկ Ապարներ գյուղի կաթոլիկ

համայնքն ամբողջովին ապավինել էր Եղիային (նամակ 90, 119)՝։ Համակրանքը եղել է փոխադարձ, և կապուչինները սիրով արձագանքել են Եղիայի օգնության կանչերին՝ դժվարին կացության պահերին, մասնավորապես, հյուրընկալելով նրան 1722 թ. քաղաքական փոթորկուն իրադարձություններից հետո, երբ Եղիան կացարան չուներ, կամ, ապաքինելով նրան, երբ Սպահանում հիվանդանալով և իր տնօրեն Բորեգարի կողմից անուշադրության մատնրվելով, Եղիան տեղափոխվում է Նոր Ջուղա՝ Հիսուսյանների վանք (նամակ 114)։

Սակայն նման փոխհարաբերությունները չէին կարող անհետևանք մնալ և ենթադրում էին Պարսկաստանում կաթոլիկությանն ընդդիմադիր լուսավորչականների անբարյացակամ մոտեցում կաթոլիկության նվիրյալ Եղիայի նկատմամբ։ Պատմական հանրահայտ փաստ է, թե հայ համայնքը մշտապես որպիսի դիմադրություն է ցույց տվել կաթոլիկության քարոզչությանը, որքան ջանքեր է գործադրել պապականությունը հարյուրամյակներ շարունակ իր ազդեցության ոլորտը ներգրավելու լուսավորչական հայերին։ (հիշենք, թեկուզ, կարմելիտներին)։ Ուստի վերջիններիս մոտ անհաշտ դայքարի հոգեբանություն է մշակվել կաթոլիկների նկատմամբ, որոնց շուրջ ստեղծում էին անհանդուրժողության մթնոլորտ, անհաջողության մատնելով կաթոլիկների ոտնձգությունների յուրաքանչյուր փորձ։ Կասկածից վեր է, որ նույնպիսին էր վերաբերմունքը Եղիայի նկատմամբ։ Ուրեմն և, պատահական չեն նրա և պարսկահայ համայնքի միջև լարվածության այն նոտաները, որոնք առկա են նամակներում։ Հորդորելով Նոր Ջուղայում հաստատված կաթոլիկ քահանա Տեր-Մելքոնին հեռանալ այնտեղից և դնալ Բաղդադ, Եղիան գրում է. «Ջուղայեցւոց խօսքն և ուխտն և քրիստոնեութիւնն չէ կատարեալ» (նամակ 50), և դա այն պատճառով, որ ջուղայեցիներին կաթոլիկություն պատվաստելու փորձն անհաջողության էր մատնվել։ Այսպիսով, Եղիա Մուշեղյան-հայ համայնք հարաբերությունները ոչ մի գրավիչ բան չունեին Եղիայի համար։ Այս պարագան պարզորոշ արտահայտված ենք գտնում իր տնօրենին՝ Բորեգարին ուղղված նրա նամակներում. դրանք ցավով ու զայրույթով տոգորված նամակներ են. «Մեր մահլի հայերն կամին թշնամութիւն անել և ոչ են վախում» (նամակ 77), ապա՝ որ հայերը մի առիթ են փնտրում, որ իրեն վիրավորեն...։ Եվ իբրև այս և համանման տվայտանքների գագաթնակետ, Եղիան գրում

է. «Ես էլ կարել չեմ դիմանալ» (Նամակ 78)։ Մի այլ նամակում. «Ես էրվեցայ էս քաղաքն... Օրըստորէ նոր նոր բաներ կանեն իմ գլխուս...» (Նամակ 81)։

Այսպիսով, ի սեր կաթոլիկության Եղիան դառնում է նրա ղոհը (բայց բանն այն է, որ այսպիսի նվիրվածությունից հետո Եղիան հիասթափվելու է կաթոլիկներից, լրիվ շրջադարձ կատարելով. իր մաշկի վրա զգալով մտերիմ պատրիների դավաճանությունը)։

Սակայն Մուշեղյանը խնդիրներ ուներ նաև ապառիկ առևտրից օգտվող գնորդների տալիք գումարները ստանալու հարցում, որը հարատև հոգսի առարկա էր և ստիպում էր օժանդակություն փնտրել այլնայլ պաշտոնյաների մոտ. հատկապես բարձրաստիճան իշխանավորների օգնությունն օդի պես կարևոր էր վաճառականի համար այս հարցում։ Այդ է պատճառը, որ Եղիան և Բորնգարը ուշիուշով հետևում էին, թե ով է լինելու նոր խանը, քանի որ հիմնականում նրան էին դիմում պարտքահավաքման դժվարին գործը կազմակերպելու համար (Նամակ 82)։ Իրենց հերթին, պաշտոնատար անձինը (անշուշտ, շահադիտական նպատակներով) ձգտում էին մեծահարուստ վաճառականության հետ շփումներ ունենալ, մանավանդ, Արևելահնդկական ընկերության ներկայացուցիչների, ասել է թե՝ Մուշեղյանի հետ։ Արդյունքը ղոհացուցիչ էր երկուստեք, և նամակները պատմում են այն ընծաների մասին, որ ստանում էին նրանք միմյանցից (Նամակ 100...)։

Սակայն գոյություն ուներ մեդալի հակառակ երեսը. Եղիայի դիվանի առևտրական տարաբնույթ վավերագրերը, մասնավորապես, պարտամուրհակները վկայում են, որ Պարսկաստանի ֆեոդալներից շատերը մեծ գումարներ էին պարտք հայ վաճառականներին։ Վերջիններս մեծ հույսեր էին կապում խանի հետ, որքան էլ նրա օգնությունը պարտքերի հավաքման գործում թանկ էր նստում իրենց վրա։ Գործն ավելի էր դժվարանում, երբ փոխհատուցման տուրհատում խանն ինքն էր վերածվում շարքային պարտապանի, որից դրամ գանձելու գործը պետք է իրականացվեր արդեն բարձրաստիճան մարմինների օգնությամբ։ «Ակար (եթե) դիմանաս,-գրում է Բորեդարը Եղիային,-թէ խանն ֆիքր չանէ մեր փողն հասուցանել ե ինքն փողն չի տայ, որ մեզ տալու ա, շուտ ինձ խապար արայ, որ անեմ ինչպէս պիտի անել» (Նամակ 79)։ Եղիան

հաճախ էր հայտնվում բարդ իրավիճակներում, գրեթե միայնակ կրելով Արեւելահնդկական ընկերության Թավրիզի մասնաճյուղի գործերի ծանրությունը։ Բորեգարը հաճախ էր բացակայում և միայն նամակներով հրահանգներ տալիս Եղիային, նրան շարունակ դնելով դժվարին կացության մեջ։ Այստեղից էլ՝ Մուշեղյանի դժգոհությունն իր տնօրենից։ Նամակներից մեկում, սովորաբար ղուսպ Եղիան այսպես է գրում Բորեգարի մասին. «Ոչ տեսի ի նմանէ բարութիւն, այլ՝ չարութիւն, ոչ տեսի քաղցրութիւն, այլ՝ դառնութիւն, ոչ տեսի շահ, այլ՝ վնաս, ոչ տեսի սեր՝ ատելութիւն»[8]։

Այսպիսով, տհաճ մարդկանց ու «դուշմանների» հետ փոխհարաբերությունները դժվարացնում էին Մուշեղյանի կյանքը Պարսկաստանում և օրեցօր նրան մղում այդ երկիրը լքելու մտքին։

Մյուս կողմից, սակայն, լինելով եռանդուն և գործունյա անձնավորություն, Մուշեղյանը, ինչպես նշվեց, ակտիվ հասարակական կյանք էր վարում, «դուշմաններից» բացի ուներ և «դոստեր», որոնց միջոցով կարգավորում էր իր գործերը։ Ավելին, առանձին անհատների կամ խմբերի խնդրանքով միջնորդում էր պետական մարմինների առջև որևէ հարցի լուծման համար, «արդ անում» (դիմում) նույնիսկ շահին։ Դիվանում պահպանվել են մի շարք խնդրագրեր զանազան հայցումներով[9], որոնց առկայությունը հավաստում է Եղիայի հուշագրության այն տեղեկությունը, թե ինքը պալատական շրջանների հետ կապեր ու նիստուկաց ուներ։ Դրա վկայությունն է նաև 1723 թ. նրա՝ Մեշեդում ֆրանսիական դեսպան նշանակվելու փաստը, ինչպես նաև թագավորական ուղերձները եվրոպական տերություններին հանձնելու պատասխանատու գործի ստանձնումը (այդ մասին ակնարկվեց վերը)։

Նշենք, որ ուղերձների առաքման անհրաժեշտությունն առաջ եկավ Պարսկաստանի օրհասական իրավիճակի թելադրանքով, երբ մայրաքաղաք Սպահանը պաշարած աֆղանների առաջնորդ Միր-Մահմուդը պարսից Սուլթան Հուսեյնից ստացավ նրա թագը, իսկ արքայորդի Թահմասպը, ապաստանելով Մեշեդում և իրեն շահ հայտարարելով, անզոր ճիգեր էր գործադրում՝ փրկելու իր հարստությունն ու երկիրը[10]։ Միջոցներից մեկը դիտվում էր եվրոպական երկրների կողմից շահ Թահմասպի ճանաչումը և հետագա բարեկամական հարաբերությունների ապահովումը։

Թագավորական ուղերձների առաքման գործի ստանձնումը Մուշեղյանի կողմից պատահական չէր. քանզի նրան առաջնորդում էր մեկ այլ՝ կարևոր դրդապատճառ։ Դա նրա վաղեմի երազանքն էր հանդիպելու ռուսական ցարին և նրան հորդորելու ազատագրել հայերին թուրք-պարսկական գերիշխանությունից։ Այդ էր պատճառը, որ Եղիա Մուշեղյանի պատվիրակությունը հայտնվեց Ռուսաստանում։ Եղիան նախապես ուիտեր. թե ինչ վտանգներով է դա հղի (խնդրեց շահից գրություն՝ ուղղված ցարին, որ «ճամփա տա» պատվիրակությանը[11], բայց դա չկատարվեց, պարզ է՝ պալատում տիրող հակառուսական տրամադրությունների պատճառով)։ Ուրեմն, գիտակցաբար «գնաց ռիսկի», քանի որ նրան հուզում էր ազգի ճակատագիրը, մի բան, որ վաղուց էր արմատներ գցել լայնախոհ, Հ.Ոսկյանի խոսքերով՝ «մեծապես ազգասէր եւ... հայրենասէր» վաճառականի հոգում։

Դեռևս պատանեկան հասակից Եղիային հրապուրում էր Իսրայել Օրու գործունեությունը հայերի ազատագրման ուղղությամբ։

Իր շրջագայությունների ընթացքում Եղիան, հավանաբար, հանդիպում է նրան (1708 թ., երբ Օրին դեպի Պարսկաստան ուղևորվելիս իջևանում է Շամախիում), միևնույն ժամանակ ծանոթանում իր ապագա տնօրենի՝ ֆրանսիացի սպա Բորեգարի հետ, որն Իսրայել Օրու պարսկական դեսպանության կազմում էր։

Եղիա Մուշեղյանի քաղաքական կողմնորոշման վրա, անշուշտ, ազդեցություն պիտի ունենար սոցիալ-քաղաքական այն մթնոլորտը, որ գոյություն ուներ պարսկահայոց և, ընդհանրապես, հայության մեջ XVIII դարի առաջին տասնամյակներին։

Ինչպես հայտնի է, հայ ազատագրական շարժման մեջ ռուսական կողմնորոշումը ձևավորվեց աստիճանաբար։ Հարկ եղավ նախ Եվրոպայում տարիների դռնաբախումների մի շրջան՝ ապարդյուն վախճանով, որպեսզի հայ ազատագրական շարժման կողմնորոշման մեջ ի դեմս նրա ռահվիրա Իսրայել Օրու շրջադարձ կատարվեր դեպի Ռուսաստան։ Բայց դա գործի միայն սկիզբն էր, առջևում ինքնահաստատման ճանապարհն էր։ «Վավերագրական ճանաչված աղբյուրներից և ոչ մեկը,— գրում է հարցիս հմուտ գիտակ Ա. Հովհաննիսյանը,— ԺԸ (18-րդ) դարի սկզբներում չի վկայում ռուսական օրիենտացիայի ժողովրդականության մասին»[12]։ Մեծ ջանքեր պահանջվեցին Իսրայել Օրուց և Մինաս վարդապետից՝ հա-

մոդելու հայ հոգևորականությանը և մելիքներին՝ կանգնել հայ ազատագրական պայքարի ռուսական կողմնորոշման դիրքերում, քանզի հայ դեկավար շրջաններում դեռևս ամուր էր ազատագրման հույսը Եվրոպայից։ Հոգևորականությունն օգնություն էր ակնկալում ավելի շուտ Հռոմից, քան Ռուսաստանից[13]։

1707—1711 թթ. Օրին, լինելով Պարսկաստանում և ապա՝ Անդրկովկասում, դդալի ներգրում ունեցավ հայ ազատագրական գաղափարի արմատավորման և ժողովրդի մեջ Ռուսաստանի նկատմամբ համակրանքն ուժեղացնելու գործում[14]։ Սակայն, ի վերջո, Պարսկաստանում քաղաքական անցուդարձի նոր ալիքը՝ կապված 1722 թ. աֆղանների հարձակումների և նրանց հաջորդած՝ Սեֆյան հարստության անկման հետ, օբյեկտիվ պայմաններ ստեղծեց ռուսական կողմնորոշման հարցում բոլոր տատանվող շերտերի համար՝ հաստատապես ապավինելու այդ երկրի օգնությանը։ Հայ առևտրական դասի համար Պարսկաստանում ստեղծված խիստ դժվարին պայմաններն ավելի տեսանելի էին դարձնում հայերի առևտրական արտոնությունները Ռուսաստանում։ «Ռուսական օրիենտացիան խմորվեց 1720-ական թվականների շուրջը,— նշում է Ա. Հովհաննիսյանը,— երբ նեղված պարսից դեմ ապստամբած ցեղերից, հայ կղերի և մելիքության մի խոշոր հատված հարկադրված եղավ փարել ռուսների օգնությանը և նրանցից փրկություն հուսալ»[15]։

Այսպիսով, նոր քաղաքական կողմնորոշման գաղափարն իր ծննդից հետո դժվար ճանապարհ անցավ՝ իրենով համակելու համար հայ հասարակական բոլոր խավերին։ Այլ խոսքով, մինչև 1720-ական թվականների սկիզբը «ռուսոֆիլ» հոսանքի հունը չափազանց նեղ էր։ Դրանով իսկ առավել արժեվորվում է այն անհատների դերը, որոնք այդ հունի մեջ հայտնվեցին։ Եվ Եղիա Մուշեղյանը նրանցից մեկն էր։ Ոչ ոք չի պատրաստվում վերջինիս համեմատել Իսրայել Օրու հետ։ Սակայն անվիճելի է, որ Եղիայի պես ռուսամետ և միաժամանակ ազգասեր ու հայրենասեր մարդկանց կարիքը չափազանց մեծ է եղել հայ իրականության մեջ ռուսական կողմնորոշման խմորումների շրջանում, և նրանց քանակը ուղիղ համեմատական էր այդ շարժման աճին։

Քանի որ Օրու անձի շուրջ ստեղծվել էին իրարամերժ կարծիքներ[16], իսկ պարսից արքունիքը բացասական դիրք ուներ նրա նկատ-

մամբ, անհրաժեշտ էր հակազդեցության պատշաճ ուժ՝ հաղթահարելու այն պատնեշը, որի ետևում Օրու հակառակորդներն էին, իրանահայ հարուստների «չարամտությունն» ու նրանց լրտեսները, առանձին անձանց ու խմբերի թշնամական վերաբերմունքը[17]:

Հակազդող ուժեր, անշուշտ, գոյություն ունեին, նույնիսկ՝ պարսկահայ հարուստ վաճառականների շրջանում: Սակայն Օրու գործը պահանջում էր առավել ստվար բանակ, նրան հավատ ընծայողների, նրա գործունեության արդյունքն օրեցօր սպասողների, մի խոսքով՝ նվիրյալների բանակ: Եղիա Մուշեղյանը, փաստորեն, այդ նվիրյալներից էր: Պատահական չէ, որ 1709—1710 թթ. Օրու շուրջը ստեղծված մթնոլորտը նկարագրելու համար Ա. Հովհաննիսյանն իբրև կարևոր աղբյուրներից մեկը վկայակոչում է Մուշեղյանին. «Թե ինչ մթնոլորտ էր ստեղծված այս պահին Օրիի շուրջը՝ ակներև է նաև նույն այդ ժամանակ նրան Շամախում դիմավորած լատինադավան առևտրական Եղիա Մուշեղյանի վկայությունից»[18], որին հետևում է Եղիայի ուխտը՝ Պետրոս Բագավորի նկատմամբ իր նվիրվածության հավաստիքը: Ա. Հովհաննիսյանը համոզված է, որ Մուշեղյանը Պետրոս Մեծի հայանպաստ տրամադրության մասին «հաստատապես լսած կարող էր լինել... հենց Օրիից»[19]:

Գիտական գրականության մեջ Եղիա Մուշեղյանին անդրադառնում են իբրև վաճառականի և հասարակական գործչի, բարձր գնահատական տալով նրա անձին և գործին: Այստեղ, սակայն, մեզ հետաքրքրողը հետազոտողների կողմից Եղիային՝ որպես ռուսական կողմնորոշման զաղափարակրի, որակումն է, որը չի նկատվում, ավելի ճիշտ՝ որը, թեև, ուղղակիորեն չի տրվում նրան, սակայն աներկբայորեն բխում է նրան հասցեագրված գնահատականներից:

XVIII դ. հայ-ռուսական հարաբերությունների վերաբերյալ վավերագրերի ժողովածուի մեջ Մուշեղյանը ներկայացվում է որպես «Իսրայել Օրու ականավոր ժամանակակիցը, որը հանդիպում է ունեցել նրա հետ Շամախում...»[20]: Խոսելով Գյանջայի բնակիչների և օսմանցիների միջև 1723 թ. պատերազմների մասին, Ա. Հովհաննիսյանը վկայակոչում է դարձյալ Մուշեղյանի տեղեկությունը, նրբան անվանելով «այն դարաշրջանի երևելի հայ գործիչ»[21]: Հ. Ոսկյանը, ով 1927 թ. հանգամանորեն ծանոթացել է Մուշեղյանի ձեռագիր աշխատությանը[22] և նրա մասին ուշագրավ գործ գրել՝ ձեռագրից

ընդարձակ մեջբերումներով, նշում է, որ Եղիան «Հայաստանի ազատութեան բարձր նպատակին կը նուիրուի»[23]: Նույն հեղինակի ծանուցմամբ Եղիայի գրչին պատկանող «Վիճաբանութիւն»[24] գրությունը կարևոր նյութ է բովանդակում, «վասնզի ասոնց մէջ ամփոփուած են Եղիայի՝ իր ազգին ազատութեան համար առած քայլերը»[25]:

Եվ այսպես, վաղ հասակից Եղիան արդեն տոգորված էր ազգասիրական հովերով և Հայաստանի ազատագրման համար ուղիների որոնմամբ։ «Թէպէտ վաղուց գիտէի,— գրում է նա,— թէ Պետրոս Թագաւորն գալոց է փրկել զազգն մեր, բայց առաջի անգամն որ գնացի Շամախի եւ հաստատապէս լսեցի, թէ ամենեւին ուուսո թաղաւորն գալոց է առնուլ յերկիրն Պարսից վասն փրկելո ղմեզ, առժամայն ուխտ եդի...»[26]: Ի դեպ, այդ գաղափարը նրան ղրպկեցրել է ամբողջ կյանքում, և այն աստիճան, որ ինչ-որ տեղ նա արդեն համոզված էր, որ իր միջոցով տեղի կունենա հայոց ազատագրումն օտար լծից։ Նա հատկապես ընդգծում է դա իրեն մատնող սյատրի Հովհաննեսի վարքագիծը մեկնաբանելիս. «...Նայ տեսաւ իմ փառքն... եւ ստուգիւ զգաց, թէ իմ ձեռամբն լինելոց էր փրկութիւն ազգին իմոյ, նախանձեցաւ, աճապարեաց ոչ լինել»[27]։ Անդամ Ռուսաստանում կրած բաղում գառնություններից հետո հեռանալով այնտեղից, Եղիան շարունակում է փայփայել իր մեջ միս ու արյուն դարձած գաղափարը։ Ռուսաստանից դուրս գալուց հետո ճամփորդություն սկսելով դեպի Եվրոպա, Եղիան «հետեւեալ նպատակները դրած էր՝ տեսնել Եվրոպա, աշխատիլ հայ ազգին ազատութեան համար, իր մասին եղած կասկածները փարատել...»[28]:

Այսքանից հետո միանգամայն հասկանալի է, երբ Եղիան մեզ ներկայանում է որպես անձնազոհության պատրաստ հայրենասեր, որն իր ազգի ազատության և թագավորության դիմաց իր կյանքը պահանջվելու դեպքում «յօժար կամօք... մատուցանեմ զանձն իմ»[29]: Իսկ Եղիայի հայտնի ուխտը, որի մասին հիշատակեցինք մեջբերումներից մեկում, հետևյալն է։ Շամախում հաստատապես հավաստիանալով, որ, իրոք, Պետրոս Մեծը «գալու է Պարսկաստան և փրկելու մեր ազգն», Եղիան խոստանում է. «ուխտ եդի յանձին իմոյ ասել յամենայն աւուր հինկ հայր մեր եւ հինկ ողջոյն Մարիամ... այսու դիտաւորութեամբ, թէ Տէր Աստուած, ի տասանց կենացն ի-

մոց հատ յինէն եւ դիր ի վերայ կենացն Պետրոս թագաւորին։ Տէր. տուր նմայ առաւել կարողութիւն, զօրութիւն, որ ամենայն յաջողութեամբ գայ եւ ազատէ զմեր ազգն...»[30]: Նշենք, որ Եղիային հուզում էր ոչ միայն հայ ժողովրդի՝ ռուսաց թագավորի միջոցով ազատագրումը, այլև, ինչպես իրավամբ նկատում է Ա. Հովհաննիսյանը, հայոց թագավորության, պետական անկախության վերականգնումը, որը պարսկահայ վաճառականների միջավայրում «բազմադարյան ապրուն մի գաղափար էր»[31]:

Եղիա Մուշեղյանի քաղաքական վարքագծի վերաբերյալ Հ. Ոսկյանի հետևյալ դիտարկումը չափազանց արժեքավոր է մեր եզրահանգման հավաստման համար։ Անդրադառնալով Մուշեղյանի նրկատմամբ զրպարտություններին, Հ. Ոսկյանը մասնավորապես շեշտում է, որ ամենախոր հարվածը, որ մեծապես ցնցում է նրա ազգասիրական ոգին, այն զրպարտությունն էր, թե. «Նա իր ազգին ու հայրենիքին ազատութեան թշնամի է, մինչդեռ ինքն Իսրայել Օրիի հոգւով, թէեւ, ինչպէս կերեւայ, գործելու կերպին մէջ բաւական տարբեր ուղղութեամբ, կաշխատէր գերութեան լուծը բեկանել...»[32]: Եվ իրոք, Եղիան թեև ոգևորված է եղել Օրու գաղափարներով և Ռուսաստանի նկատմամբ նրա հավատով ու ակնկալիքով, սակայն գործունեության կերպն ու մեթոդն այլ է ընտրել։ Դժվար է անվերապահորեն մեկնաբանել Մուշեղյանի՝ նման գործելակերպի պատճառները։ Սակայն ակնհայտ է այն փաստը, որ Եղիան իր ծրագրերի իրականացման համար գործում էր միայնակ, մի տեսակ մեկուսի, որ կարելի է բացատրել կա՛մ արտակարգ զգուշավորությամբ, կա՛մ իր ուժերը գերագնահատելու մարմաջով (հիշենք նրա խոսքերը՝ «իմ ձեռամբն լինելոց էր փրկութիւն ազգին իմոյ»)։ Ինչ վերաբերում է զգուշավորությանը կամ գաղտնապահությանը, ապա այն պարզապես անհրաժեշտություն էր ազգային-ազատագրական շարժման ընթացքում։ «Մայրահեղ ծածկամտությունն ու զգուշավորությունը» Ա. Հովհաննիսյանը դիտում է որպես «Օրիի և Մինաս վարդապետի գործունեության հատկանշական կողմը...» և նշում, որ վերջիններս «սպառեցին իրենց կյանքի կարևոր շրջանը քաղաքական գաղտնի բանակցությունների մեջ»[33]:

Ի դեպ, գաղտնապահությունը Եղիայի մոտ, կարելի է ասել, նաև «պրոֆեսիոնալ» հատկանիշ էր, քանի որ նամակները, որոնցում վաճառականները միմյանց հաղորդում էին առևտրի աշխար-

հի հույժ կարևոր գաղտնիքներ, նույնպես պահանջում էին խիստ գաղտնապահություն և միայն հուսալի նամակատարի միջոցով էին ուղարկվում, բայց և այնպես, մեծ թվով նամակներում Եղիան զգուշացնում էր հասցեատիրոջը՝ «մարդու չասես»։

Այլ պատճառներով հանդերձ, նաև ծայրահեղ գաղտնապահության հետևանք չէ՞ր արդյոք, որ Մուշեղյանն իր գեղեցիկ հայրենասիրական դաղափարներով մնաց ստվերում։ Նույնիսկ Իսրայել Օրու նման մեծության անունն ինչ-որ տեղ «տուժեց» չափազանց գաղտնի գործելաձևի պատճառով. մեծ ջանքերով նա իր կողմը գրավեց Եսայի կաթողիկոսին, որը, սակայն, «չկարողացավ լավ ծանոթանալ Օրիի գործերին ու ծրագրերին»[34]: Հազիվ համոզելով կաթողիկոսին՝ դնալ Մոսկվա, Օրին, սակայն, չրացայտեց նրան իր նպատակները... Իսկ կաթողիկոսն իր դրած պատմական հիշատակարանում անտեսում է Օրուն։ Եվ, ի վերջո, այսպիսի մի որոշակի փաստ. Պետրոս Մեծի պարսկական արշավանքից հետո հայերի կողմից Ռուսաստան առաքված բազում դրություններում մեջ որևէ «հիշատակություն չենք գտնում այն մարդու մասին, որ առաջինն էր հայերի քաղաքական ճակատագիրը Ռուսաստանի միջոցով տնօրինել կամեցողներից։ Իրերի բերմամբ հայերը գնացին Իսրայել Օրիի նշմարած քաղաքական հունով՝ անծանոթ պատմական այն իսոր դեմքին...»[35]:

Եթե ուշադիր քննենք, նույն կերպ Մուշեղյանն է անտեսվել (որին, անշուշտ, չպետք է նույնացնել Օրու մեծության հետ, և որի գործունեությունն աննկատ մնալու ավելի վտանգներ ուներ)։ Գրեթե բոլոր անուններր, որոնց հետ Եղիան առնչվել է 1724 թ. նամակագրությամբ, կարող ենք հանդիպել այդ շրջանին վերաբերող պարսկալեզու հետազոտություններում, որոնցում, սակայն, չենք գտնի Եղիա Մուշեղյանի անունը[36]:

Զարմանք է հարուցում Եղիայի գործելակերպի մեջ նկատվող հակասական գծերի առկայությունը. մի կողմից ծայր աստիճանի գաղտնապահություն, անգամ անպատեհ դեպքերում, մյուս կողմից անշրջահայաց մոտեցում իր ծրագրին ու իր անձին, որը և ճակատագրական եղավ նրա համար։

Այժմ, երբ հիմնականում մեկնաբանված են Մուշեղյանի քաղաքական հայացքները և նկարագրված նրան շրջապատող քաղաքական-հասարակական մթնոլորտը, թերևս միանգամայն պարզ

ու հասկանալի է Ռուսաստանում նրան հասած պատահարը, թեև, առաջին հայացքից՝ անտրամաբանական։ Այնպիսի ռուսասեր անձնավորություն, որպիսին Եղիան էր, պետք է որ Ռուսաստանում, եթե ոչ գրկաբաց ընդունելություն գտներ, ապա, առնվազն, վտանգներից զերծ ու ապահովագրված լիներ։ Սակայն չպետք է մոռանալ, որ «ռուսոֆիլ» Եղիան իր վրա էր սևեռել Պարսկաստանի հակառուսական տրամադրությունների ալիքը, ուստի և՛ ունիթորները, և՛ պարսից իշխանությունները առիթը բաց չէին թողնի հարվածելու նրան։ Դրան ավելացնենք, որ կաթոլիկ Եղիայի դեմ սուր էին ճոճում, ինչպես նշեցինք, հայ լուսավորչականները, ասել է թե պարսկահայ համայնքի լայն շրջանները, որոնք նրան կոչում էին դավաճան, ազատագրման խանգարիչ...։

Առիթը ներկայացավ։ Եվ գործի դրվեց ժամանակի միջպետական հարաբերություններում (մանավանդ՝ Եվրոպա—Արևելք) ընդունված բանսարկությունների մեքենան։ Բավական էր ռուսական իշխանությունների մոտ շշնջալ, թե Եղիան ֆրանսիական գործակալ է, նաև դալիս է բեկանելու ռուս-թուրքական նորերս կնքված պայմանագիրը, որպեսզի անվստահության ստվերը Եղիա Մուշեղյանի վրա կատարյալ լիներ և նրա ծրագրերն իր հետ միասին ձերբակալվեին։

Դատական գործում առկա է զեկուցագրերի, ամբաստանագրերի, վկայագրերի, մեծաթիվ հարցաքննությունների արձանագրությունների և համանման այլ գրությունների բազմություն, որի մեջ և նշվածների խաչաձև համեմատություններն են, քանի որ հեղինակները (Իսմաիլ-բեկ, Հակոբ [Яков Григорьев], Մինաս վարդապետ, կապուչին Հովհաննես [Իվան Բարտիստ], Եղիա) տարբեր կերպ էին մեկնաբանում միևնույն իրողությունը։ Այս լաբիրինթոսում մերթընդմերթ արձակվում էին «Ուկազներ»՝ Եղիային ու Հովհաննեսին այս կամ այն վայր տեղափոխելու մասին (Մոսկվա, Ս. Պետերբուրգ, Ուգլիչ, «որոշակի տեղ» և այլն) և ապա՝ վերջնական վճիռ նրանց վերաբերյալ։

Դատական գործում մեղադրանքների մեծ մասը պտտվում է, որքան էլ տարօրինակ թվա, Եղիա Մուշեղյանի, իբր, հակառուսական խոսակցությունների շուրջ։ Զգալի տեղ է հատկացվել Հակոբ Գրիգորևի[37] զեկուցագրերին և նրանց պարզաբանումներին։ Պակասը լրացրել են պատրի Հովհաննեսը և Մինաս վարդապետը։ Վեր-

ջինս, օրինակ՝ վկայել է. «Մուշեխը Նորին կայսերական մեծության նկատմամբ անբարյացակամ է»[38]. Հակոբ Գրիգորևի զեկուցագրում կարդում ենք. «Նույն ինքը՝ Իլյան Նիժնիում, բարկացած լինելով, ասել է... որ Ռուսաստանում միայն քրիստոնեական եկեղեցիներ են և եկեղեցիների վրա՝ խաչեր, և զանգերը ղողանջում են, իսկ գործերով ռուսները ոչ քրիստոնյա մարդիկ են, ողջը ստում են...»[39]:

Եղիայի «հակառուսական պահվածքի» մասին զեկուցագրերը, հավանաբար, թույլ գտնվեցին, քանի որ հիմնվում էին միայն բանավոր խոսքի վրա, և ինքը՝ Եղիան իր պատասխաններով, նաև հայտարարություններով հերքում էր դրանք. այսուհանդերձ, անվստահության քողը մնաց նրա վրա։

Արտաքին գործոց կոլեգիայում մեծ իրարանցման պատճառ է դարձել մատնիչների տեղեկությունը շահի ուղերձների մասին, որոնք ի վերջո գտնվեցին Եղիայի «սունդուկներում». թարգմանվեցին, ուսումնասիրվեցին ծայրից ծայր և երբ համոզվեցին, որ նրանցում որևէ սպառնալիք չկա Ռուսաստանի համար, այս մասին հարցաքննությունների շղթան փակեցին։

Հատկանշական է, որ Մուշեղյանը շանում էր դատական սլրոցեսն իսկ օգտագործել իր գաղափարների որևէ կերպ արտահայտման համար, և մեղադրական դործի փաստաթղթերում հանդիպում ենք Ռուսաստանի միջոցով Թուրք-պարսկական լծից հայերի ազատագրման մասին խոսքերի։ Պատրի Հովհաննեսի հարցաքննության արձանագրության մեջ կարդում ենք. «Մեկ էլ այն էի ուզում հաղորդել, որ շատ քրիստոնյաներ Պարսկաստանի ներսում և հատկապես՝ հայեր, պարսիկներից մեծ նեղություններ են կրում և այդ պատճառով չէի՞ն բարեհաճի, արդյոք, Նորին կայսերական մեծությունը նրանց փրկության համար իր զորքերը մտցնել այնտեղ»[40]: Ակնհայտ է Եղիայի ազդեցությունը, որն օրինաչափ է թվում այնպես, ինչպես նրա ձգտումը՝ համոզել ռուս պաշտոնյաներին, թե պարսից շահը դրական վերաբերմունք ունի Ռուսաստանի հանդեպ[41]:

Գործում առկա են մի շարք հրահանգներ, ցուցումներ, որոշումներ, հրովարտակներ՝ արդեն 1725 թ. և նրանից հետո արձակված, որոնք, որպես գերագույն վճիռ, թելադրում են կալանավորների հետագա ճակատագիրը։

1725 թ. ապրիլի 20-ի որոշմամբ Հովհաննես կապուչինին «մեծ թվով կասկածելի պատճառների բերումով» անցագիր չի տրվի ռուսական պետության տարածքով անցնելու, այլ նա կտարվի Աստրախան, ձմեռն անցկացնելուց հետո 1726 թ. կուղարկվի Դերբենդ, որտեղից՝ Պարսկաստան։ «Իսկ հայ Իլյա Մուշեխին հայտարարել, որ, թեև նա ենթակա էր խոշտանգման և աքսորի, սակայն, քանի որ նա հայտարարել է, թե բարեկամներ ունի պալատում, հանուն դրա ներել նրա մեղքը, որ նա, բնակվելով Աստրախանում և թղթակցելով, շահին լավ տրամադրի դեպի Նորին կայսերական մեծությունը...»[42]։

Նույն որոշմամբ հայտարարվեց. Եղիային պահել հսկողության տակ, նրա և Հովհաննես կապուչինի մոտ եղած նամակները և ուղերձները չվերադարձնել իրենց, այլ պահել արտաքին գործոց արխիվում։

Նույն որոշմամբ՝ մատնիչ Հակոբին «պատշաճ կերպով պարգևատրել և թույլ տալ գնալ ուր որ կցանկանա»[43]։

Մեկ այլ՝ 1725 թ. օգոստոսի 6-ի որոշման մեջ ասվում է, որ Մուշեղյանի գործը լսվել է և ավարտվել, նրան հրամայված է լինել «թագուհու ծառայության մեջ» Աստրախանում[44]։

Վերջին՝ 1726 թ. սեպտեմբերի 22-ի Եկատերինա կայսրուհու հրամանագրում կարդում ենք. Եղիային երկու մարդով տեղափոխել Աստրախան, պահել ըստ նախկին ցուցումի և տալ առևտրի աղատություն, որ իր սնունդն ապահովի[45]։

Այս որոշումից ևս տաս տարի անց միայն Եղիան հեռանալու թույլտվություն է ստանում և 1736 թ. լքում Ռուսաստանը[46]։

Կարծում ենք, Մուշեղյանի նկատմամբ դավաճանական գործողություններր հիմքում ունեին և՛ անձնական, և՛ պետական շահերից ելնող դրդապատճառներ։ Ամենևին հարկ չկա այստեղ մեկ առ մեկ վերլուծելու յուրաքանչյուր մատնիչի նպատակները, կամենում ենք միայն մեջբերել Եղիային համակրող մի վեղարավորի բացատրությունը նրա ձերբակալման պատճառների մասին։ Դիմելով Եղիային, նա ասում է. «Նախ, դուն միշտ գովաբանէիր զռուս թագաւորն առաջի պարսից... Տեսաւ (պատրի Հովհաննեսը—Լ. Դ.) զքո շերմեռանդ սէրն ընդ Ռուստաց և յայտնին ընդ Ֆռանցիզաց, իբր թէ կամիս... միաբանել վասն Ռուստաց»։ Որպես երկրորդ պատճառ նշում է, թե պատրի Հովհաննեսը ցանկանում էր հետևել պատ-

ր. Բեռնարդոսի՝ Եղիայի նկատմամբ գրված դիրքին։ Երրորդ՝ որպեսզի Ռուսաստանում ունեցած իրենց վանքերն «ապահով ապրին»։ Չորրորդ՝ որպեսզի Եղիային թողնի Ռուսաստանում «կալեայ» և ինքն շտապի միայնակ առ շահ[47]:

Այս վերջին դիտարկման կապակցությամբ ավելացնենք, որ Եղիայի և Հովհաննեսի միջև հակառակությունը վաղուց էր ծագել, և ուղերձների առթիվ էլ նրանց միջև «մրցություն» էր գնում, թե ով կղեկավարի պատվիրակությունը[48]:

Եվ այսպես, հանգիպումը Պետրոս Մեծի հետ այդպես էլ մրնաց բաղձանք, թեև Մուշեղյանը չէր կորցնում հույսը նույնիսկ ձերբակալումից հետո և 1724 թ. դեկտեմբերի 16-ի նամակում գրում է Մելքոնին. «...բարով որ թագաւորի յերեսն տեսնումք...»[49]: *Իսկ Գոլովկինին գրում է, որ ինքը հույժ գաղտնի մի գործ ունի, «որ միայն թագաւորին կասեմ»*[50]:

Ինչպես տեսնում ենք, Եղիա Մուշեղյանի հավատամքը՝ Ռուսաստանի միջոցով հայ ժողովրդի ազատագրման գաղափարն անհողդողդ է եղել. փաստորեն, նա դարձել է բանսարկությունների զոհ՝ ի հետևանս հենց իր ոուսամետ հայացքների. բայց անկախ նրա «միանձնյա» գործողությունների մեթոդից կամ արդյունքից, բոլոր վայրիվերումներով հանդերձ, Մուշեղյանը եղել է հայերի ազատագրման ռուսական կողմնորոշման գաղափարակիրն ու ջատագովը և այդպիսին պետք է ճանաչվի հայ պատմագիտության մեջ։

LORETTA DANEGHIAN

YEGHIA MOUSHEGHIAN AS APOLOGET OF RUSSIAN ORIENTATION

In the course of the Armenian liberation movement the Russian orientation became decisive making possible the liberation of Armenia from the Turkish-Persian domination. But the idea of Russian orientation was formed step by step, initially (early XVIII c.) having few supporters. Among the latters was Yeghia Mousheghian—a merchant who was engaged in the political life of Persia.

Since youth Yeghia was inspired by attempts to find ways of the liberation of Armenia. He was impressed by activities of

Israel Ori. Yeghia had chosed the individual way of struggle. He decided to negotiate with Russian tsar Piotr the Great. For this purpose he took the letters of Russian Shah Tahmasp addressed to European monarchs, in order to make use of this occasion for visiting Russia. But in 1724 he was imprisoned in Russia and spent there 12 years. The mission of Yeghia had failed.

The ideas of Yeghia Mousheghian's Russian orientation were formulized in his court documents (now in his archive, in Moscow).

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Նախկին ԽՍՀՄ-ի տվյալներով՝* «Архив внешней политики России» Историко-дипломатического управления МИД СССР, ф. 100, «Сношения России с Арменией», 1724 (*այսուհետև՝* АВПР, ф. 100): *Դիվանն այստեղ հանգրվանեց ռուսական իշխանությունների կողմից Մուշեղյանի ձերբակալումից հետո, փոխելով մի քանի հասցե։*

2 *Հուշագրությունը կոչվում է «Պատմութիւն իմն կարճառօտ ի վերայ անձկութեանց Եղիայիս Աստուածատուրեան Մուշեղանց, զորս կրեցի ի ազգէն ֆոանկաց, մանաւանդ ի խարերայ կրօնատրացն եւ ի սուտ եխպայրց եւ բարեկամ կոչեցելոց» (այսուհետև՝ «Պատմութիւն» կամ հուշագրություն)։ Պատմական վավերագրերի այդ հավաքածուն ընդգրկում է նամակներ, հաշվեմատյաններ, պարտավորագրեր, մուրհակներ ու առևտրական այլևայլ փաստաթղթեր, խնդրագրեր, նաև տարբեր բովանդակության գրքեր, թարգմանություններ և այլն։*

Տարիներ ի վեր տպագրության է սպասում այդ դիվանից մեր պատրաստած և ԳԱԱ հրատարակչությունը հանձնած «Եղիա Մուշեղյանի նամականին» աշխատությունը։

3 *Վերնագրված է՝* «Дело о заарестовании... армянина Ильи Мушека» (АВПР, ф. «Сношения России с Персией», д. 10 (*այսուհետև՝* АВПР, д. 10):

4 АВПР, д. 10, л. 1а.

5 *Անդ։*

6 *Համառոտ կենսագրությունը տե՛ս* Լ. Դանիելյան, *Հայատառ բանաստեղծությունների ժողովածու Եղիա Մուշեղյանի դիվանում («Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XVI, Երևան, 1996), հմմտ. «Եղիա Կարնեցու դիվան» աշխատասիրությամբ Ա. Արրահամյանի, Երևան, 1968 (այսուհետև՝* ԵԿԴ)։

7 *Այս կերպ հղումները վերաբերում են այն նամակներին, որոնք զետեղված են մեր՝ «Եղիա Մուշեղյանի նամականին» անտիպ աշխատության մեջ։*

8 *«Պատմութիւն», թ. 38բ (մեջբերումը՝ ըստ* ԵԿԴ)։

9 *Տե՛ս* АВПР, ф. 100, д. В—1, л. 4, 6, 7, 8, 11, 20, 26...

10 *Այս իրադարձությունների մասին տե՛ս «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարդիս Գիլանենցի» («Կոռնկ Հայոց աշխարհին», 1863, էջ 81—112 և 181—212),* Հակոբ Շամախեցի, *Շահոդական (Մաշտոցի անվ. մատենադարան, ձեռ. 8444, էջ*

503բ—514բ), հմմտ. Ս. Տեր-Ավետիսյան, Նադիր շահի արշավանքները (ըստ Հակոբ Շամախեցու), Երևան, 1940, Արրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն (1721—1736), Երևան, 1938, Թամբուրչի Քուչուկ Արութին, Պատմութիւն Բաղմաղ Ղուլու (Մատենադարան, Գիտական նյութերի ժողովածու, Երևան, 1941, թիվ 1, էջ 101—128), С. Р. Кишмишев, Походы Надир-шаха в Герат, Кандахар, Индию, Тифлис, 1889; Մար'աշի Սանավի Մոհամմադ Խալիլ, Պատմությունների ժողովածու, Թեհրան, 1949 (պարսկերեն)։

11 ԵԿԴ, նամակ 159։

12 Ա. Հովհաննիսյան, Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, էջմիածին, 1921, էջ 56։

13 Տե՛ս անդ, էջ 62։ Օրու մահից հետո նրա թղթերի մեջ գտնվել է Ալեքսանդր կաթողիկոսի մի գրությունը՝ ուղղված Հռոմի պապին։ Իսկ Շամախում ապրող մի Հիլվիա 1702 թ. գրում է Սիմեոն կաթողիկոսի և Եսայի արքեպիսկոպոսի մասին, որ նրանք «մեզ շատ են սիրում և արգահատանքով չեն նայում կաթոլիկ կրոնի վրա...» (անդ, էջ 60)։

14 Տե՛ս Հ. Ժամկոչյան և այլք, Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1975, էջ 670—671։

15 Ա. Հովհաննիսյան, Հայ-ռուս օրիենտացիայի..., էջ 63։

16 Օրու մասին ամրաստանությունների վերաբերյալ տե՛ս Ստանիսլավ քաղաքի հայ լատինադավան եկեղեցու ավագերեց Ստեփանոս Ռոշքայի նամակը եղուիտ պատեր Կրուշինսկուն, որը հանգամանալի քննությամբ հանդերձ բերված է Ա. Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» երկրորդ գրքում (Երևան, 1959, էջ 584—596, այսուհետև՝ Դրվագներ)։

17 Այդ մասին մի շարք վկայություններից զատ Կ. Եզյանի հրատարակած ժողովածուում առկա են Օրու թղթերը, որոնցում նա դժգոհություն է հայտնում թշնամիներից և նկարագրում նրանց չարակամ կեցվածքը (տե՛ս Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898, № 25, 98, 152)։

18 Դրվագներ, II, էջ 570։

19 Անդ, էջ 570—571։

20 «Армяно-русские отношения в первой трети XVIII века». Сб. документов, т. II, ч. I, Ереван, 1964, с. 340.

21 Անդ, էջ LXVI։

22 Տե՛ս ծան. 2։ Ձեռագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյան մատենադարանում՝ թ. 980, մանրաժապավենը՝ Մաշտոցյան մատենադարանում։

23 Տե՛ս Հ. Ոսկյան, Եղիա Աստուածատուրեան Մուշեղյան և իր գրական արտադրությունները, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1927, էջ 19 (այսուհետև՝ Ոսկյան)։

24 Այն վերնագրված է «Վիճարանություն երկրորդ կամ հարց և պատասխանիք» (Ոսկյան, էջ 64)։

25 Անդ, էջ 65։

26 Անդ, էջ 74։

27 Անդ, էջ 27։

28 Անդ, էջ 29։

29 Տե՛ս ԵԿԴ, էջ XXVII, հմմտ. Ոսկյան, էջ 26. Դրվագներ, II, էջ 571։

30 Ոսկյան, էջ 26, 74։

31 Դրվագներ, II, էջ 571։

32 Ոսկյան, էջ 49։

33 Ա. Հովհաննիսյան, Հայ-ռուս օրիենտացիայի..., էջ 64։

34 Անդ, էջ 66։

35 Անդ։

36 Օր.՝ Ալի Աքբար Բինան, որը ծավալուն աշխատություն է նվիրել Իրանի քաղաքական և դիվանագիտական պատմությանը, հանգամանորեն անդրադառնում է նաև 1724 և հաջորդ թվականների ռուս-պարսկական հարաբերություններին, խոսում է ժամանակի շատ գործիչների մասին, որոնց թվում են Եղիայի նամակների մի շարք հասցեատերեր (Իսմաիլ-բեկ, դր Բոնակ և այլք), սակայն Մուշեղյանի մասին լռություն է (տե՛ս Ալի Աքբար Բինա, Իրանի քաղաքական և դիվանագիտական պատմություն, Թեհրան, 1337 (հեջրի) (պարսկերեն)։

37 Այս անձնավորության ազգանունը Ա. Արբահամյանը նշում է՝ Հարությունյան (ԵԿԴ, էջ XVIII), մենք, սակայն, ընդունում ենք Գրիգորև (ինչպես մեղադրական գործում է)։ Դատելով Հակոբ (Յակով) Գրիգորևի զեկուցագրից, նա լրտեսության հակված անձնավորություն էր և Եղիայի խմբին է միացել Աստրայում, որից հետո շարունակ հետամուտ է եղել ռուսաց իշխանություններին իրազեկ պահելու Եղիայի և կապուչինի բոլոր քայլերի մասին (АВПР, 9. 10, л. 101—104)։

38 АВПР, д. 10, л. 38 об.

39 АВПР, д. 10, л. 292.

40 АВПР, д. 10 л. 296 об.

41 АВПР, д. 10, л. 293, 176 об.

42 АВПР, д. 10, л. 186—186 об.

43 АВПР, д. 10, л. 187.

44 АВПР, д. 10, л. 261.

45 АВПР, д. 10, л. 272.

46 Հ. Ոսկյանի ծանուցմամբ՝ Ռուսաստանում կրած նեղությունների մասին Եղիան պատմում է «Ազգաբանութիւն» գրքում, որը մեզ չի հասել (այդ մասին տեղեկացնում է հեղինակը հուշամատյանում)։

47 Ոսկյան, էջ 27։

48 ԵԿԴ, էջ XXV, 294։

49 АВПР, д. 10, л. 85.

50 ԵԿԴ, էջ 297։